

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/6

14 օգոստոսի 2014 թ.

Քննարկվեց «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ բողոքը ՀՀ ՖՆ ՕՀՎ 25.06.2014 թ-ի թիվ 1004575 ստուգման ակտի դեմ:

**«Կար-Բեգ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.**

ԿԱ ՊԵԿ նախագահի 29 նոյեմբերի 2013 թ-ի թիվ 1004575 հանձնարարագրի համաձայն «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 25.06.2014 թ-ին կազմվել է թիվ 1004575 ակտը, որն ընկերությունը ստացել է 02.07.2014 թ-ին:

Ակտում արձանագրվել են խախտումներ շահութահարկի, ավելացված արժեքի հարկի և հաստատագրված վճարների մասով:

Շահութահարկի մասով ակտում արձանագրվել է, որ «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ն 2011 թ-ի սեպտեմբերին իրացրել է բոթասի արտադրության սարքավորում 250.000.000 դրամով, որը ձեռք է բերվել ավելի բարձր գնով՝ 398.000.000 դրամով: Նշված գործարքի հետևանքով 2011 թ-ի շահութահարկի հաշվարկով նվազեցվող ծախսերը պակաս է հաշվարկվել իրացված սարքավորման ձեռքբերման արժեքի և շահութահարկի հաշվարկով ներկայացված իրացված ինքնարժեքի տարբերության չափով՝ 148.000.000 դրամ, և համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետի չհաշվարկվող ԱԱՀ-ի գումարի չափով 296.000.000 դրամ, որը պետք է միացվեր ծախսերին: Այսպիսով գտել են, որ 2011 թ-ի հաշվետու տարում հարկային վնասը կազմում է 177.600.000 դրամ:

«ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ն ակտում նշված խախտման հետ համաձայն չէ հետևյալ պատճառաբանությամբ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված «Սույն օրենքով նախատեսված դեպքերում մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում, հկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում, կրճատ հաշիվ ապրանքագրերում) առանձնացված ԱԱՀ-ի ցումարները (այդ թվում նաև՝ սույն օրենքի 6.1-րդ հոդվածով սահմանված՝ ներմուծման պահին վճարման ժամկետը հետաձգված ԱԱՀ-ի գումարները) հաշվանցման (պակասեցման) ենթակա չեն՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների և այդ գործարքների մասով ձեռքբերումների (ձեռք բերված (կամ ներմուծված) ապրանքների ու ստացված ծառայությունների) գծով մատակարարների հարկային հաշիվներում (մաքսային հայտարարագրերում, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում, կրճատ հաշիվ ապրանքագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարների միջև առաջացող բացասական տարբերությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ բացասական տարբերությունն առաջանում է օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կարգավորող մարմնի կողմից հաստատված սակագների կիրառման արդյունքում...»:

Ակտում արձանագրված խախտումը վերաբերում էր նրան, որ «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ն 2011 թ-ին իրացրել է բոթասի արտադրության սարքավորումը 250.000.000 դրամով, որը ձեռք է բերվել ավելի բարձր գնով՝ 398.000.000 դրամով, արդյունքում բացասական տարբերությունը կազմել է 148.000.000 դրամ:

Այս կապակցությամբ նշենք, որ ՍՊԸ-ն 398.000.000 դրամով գնված սարքավորումը չի վաճառել 250.000.000 դրամով: Նշված գումարով վաճառվել է սարքավորման միայն մի մասը և հետևաբար որևէ բացասական տարբերության մասին խոսք չի կարող և 148.000.000 դրամի համար «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ն չունի ուրևէ հարկային պարտավորություններ շահութահարկի մասով: Այս հանգամանքը ստուգելու համար ակտը կազմած հարկային տեսուչները, ոչ մի

պահանջ չեն ներկայացրել: Չնայած տեղեկացվել է վերջիններիս այդ մասին, սակայն ստուգում իրականացնող տեսուչների կողմից անտեսվել է ընկերության իրազեկումը:

Իսկ ինչ վերաբերում է «Շահութահարկի» մասին ՀՀ օրենքի 47.1 հոդվածով նախատեսված՝ նվազագույն շահութահարկի գումարին, որը 2011 թ-ի դեկտեմբերի 15-ին պետք է վճարվեր պետբյուջե՝ գումարով 2.500.000 դրամ, սակայն չի վճարվել, ապա այդ խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն վճարման առաջադրված 491250 դրամ տույժի հետ ընկերությունը համաձայն է և պարտավորվում է վճարել:

Ինչ վերաբերում է ԱԱՀ-ի գծով ակտում արձանագրված խախտմանը, ապա վերը նշված խախտման հիմքում ևս ստուգումն իրականացնող անձանց կոմից դրվել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պահանջը:

ԱԱՀ-ի մասով ակտում արձանագրված է, որ ՀՀ ՖՆ տեղեկատվական բազայից պարզվել է, որ 2011 թ-ի սեպտեմբերին ընկերությունն իրացրել է բոթասի արտադրության սարքավորում 2.500.000 դրամով, որի ԱԱՀ-ն կազմել է 50.000.000 դրամ (հարկային հաշիվ թիվ Ա8450547954):

Հարկային գործում առկա տվյալ սարքավորման ձեռք բերման հիմքերից, մասնավորապես 3556(5) հարկային գործ էջ 104, երևում է որ ձեռք է բերվել 398.000.000 դրամ արժեքով, որի հաշվանցված ԱԱՀ-ն կազմել է 79.600.000 դրամ: Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետի հաշվանցման ենթակա չէ իրացման ժամանակ հաշվարկված ԱԱՀ-ն այդ ապրանքների ձեռք բերման ժամանակ հարկային հաշիվներում առանձնացված հարկային հաշիվների բացասական տարբերությունը: Այդ հիմքով նշվել է, որ 2011 թ-ի սեպտեմբեր ամսին ԱԱՀ-ի դեբետից ենթակա էր պակասեցման 29.600.000 դրամը: Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի ենթակա է գանձման ավել հաշվանցված ԱԱՀ-ն՝ 29.600.000 դրամ, ինչպես նաև տուգանք 50% գումարով՝ 148.000.000 դրամ: Տույժը չի հաշվարկվել, քանի որ ընկերությունը ԱԱՀ-ի գծով ունի գերավճար: ՀՏ-ի կողմից 01.01.2014 թ-ի դրությամբ ընկերության ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գերավճարը 50.006.570 դրամի չափով գրոյացվել է: Միաժամանակ, համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ պարբերության դեբետային մնացորդների գրոյացված գումարներից ենթակա է վերականգնման 20.10.2011 թ-ի դրությամբ 44.4000.000 դրամ, այսինքն՝ ստուգմամբ ենթակա է պակասեցման 44.400.000 դրամ, քանի որ ստուգմամբ առաջարկվող ԱԱՀ-ի պարտավորությունները առաջադրվում է 20.10.2011 թ-ին և 01.01.2014 թ-ի դրությամբ գրոյացվող ԱԱՀ-ի գումարը կկազմեր այդ պարտավորությունների և առկա գերավճարի տարբերությունը:

ԱԱՀ-ի մասով վերը նշված խախտումը ստուգում իրականացնող անձանց կողմից արձանագրվել է անհիմն կերպով, վկայակոչելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետը, առանց պարզելու, թե վերը նշված հոդվածում ամրագրված իրական կարգավորումը համապատասխանում է ստուգվող օբյեկտում առկա իրավիճակին:

Ինչպես արդեն շահութահարկի մասում նշվել է, «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ի կողմից վաճառվել է բոթասի սարքավորման միայն մի մասը և ապրանքի իրացման ժամանակ չի առաջացել բացասական տարբերություն, ուստի «ԱԱՀ-ի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետը վերը նշված դեպքում կիրառելի չէ: Նշված խախտման դեմ առարկում ենք նույն հիմքով, ինչ որ շահութահարկի մասով:

Ինչ վերաբերում է հաստատագրված վճարների գծով արձանագրված խախտմանը, որ կազմվել է այն հիմնավորմամբ, որ 2010 թ-ի նոյեմբերին «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ն իր գործունեության դադարեցման և լուծարային գործընթացի վերաբերյալ հայտարարություն ՏՀՏ ներկայացնելուց հետո 2010 թ-ի դեկտեմբեր ամիսն շարունակել է գազալիցքավորման գործունեությունը:

Այս կապակցությամբ հիմք է ընդունվել ՀՀ ՖՆ բազայում առկա տեղեկությունները, ըստ որի «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ն «Հայրուսգազարտ» ՓԲԸ-ից 2010 թ-ի դեկտեմբեր ամսին ստացել է 541200 մ3 գազ: Ինչպես նաև հաշվի է առնվել, որ «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ի հարկային գործում առկա է 07.12.2010 թ-ի արձանագրությունն այն մասին, որ ընկերության գազալցակայանում իրացվել է գազ, սակայն ընկերության կողմից սահմանված կարգով գազի ֆիզիկական ծավալների վերաբերյալ տեղեկություն 2010 թ-ի դեկտեմբեր ամսվա համար չի ներկայացվել:

Այս կապակցությամբ նշենք, որ «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ն «Զվարթին» ՍՊԸ-ի հետ 2010 թ-ի դեկտեմբերի 28-ին կնքել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, որի 2.1 կետի

համաձայն «Զվարթչին» ՍՊԸ-ին է փոխանցվել բոլոր իրավասություններն ամբողջությամբ կազմակերպել և վերահսկել «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ին պատկանող գազալցակայաններում իրականացվող աշխատանքները և վճարել այդ ծախսերն, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և այլն, ինչպես նաև կազմակերպել հարկային մարմինների հետ աշխատանքները, կատարել նախատեսվող հարկերի և տուրքերի վճարումներն ինչի համար իրավասու է ձեռք բերել իր անունով հաշվիչ-դրամարկղային մեքենաներ և կրել պատասխանատվություն: Հետևաբար, «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ին պատկանող գազալցակայաններում 2010 թ-ի դեկտեմբերի 28-ից հետո իրականացրած բոլոր աշխատանքների, ինչպես նաև հարկային պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է «Զվարթչին» ՍՊԸ-ն: Բացի այդ, 2010 թ-ին «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ կողմից թույլ տրված «խախտման» համար մինչև 2014 թ-ի հունիսը ոչ ոք որևէ դիտողություն կամ նախազգուշացում չի ներկայացրել: Հետևաբար, եթե նույնիսկ համարենք, որ նշված խախտումը 4 տարի առաջ թույլ է տվել «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ն, ապա այդ խախտման համար ՍՊԸ-ն չի կարող տուգանվել և չի կրում որևէ հարկային պարտավորություն համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընկերությունը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ ՕՀՎ 25.06.2014 թ-ի թիվ 1004575 ստուգման ակտը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ԿԱ ՊԵԿ նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 29.11.2013 թ-ի թիվ 1004575 հանձնարարագրի համաձայն «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕՀՎ 25.06.2014 թ-ի թիվ 1004575 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 65.730.222 դրամ, ինչպես նաև ԱԱՀ-ի պակասեցվող գումար՝ ընդամենը 44.400.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետում մասնավորապես արձանագրվել է, որ ստուգվող ժամանակաշրջանի համար սկզբնական հաշվապահական փաստաթղթեր ընկերության կողմից չեն ներկայացվել, և քանի որ անհնար է դարձել օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկել ընկերության հարկային պարտավորությունները, ՀՀ ՖՆ ՕՀ և ՆԱԳՎ ՕՀՎ պետի կողմից 06.06.2014 թ-ին կայացվել է թիվ 93-18 որոշումը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթները կիրառելու վերաբերյալ:

Արձանագրվել է նաև, որ «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ն 2011 թ-ի սեպտեմբերին իրացրել է բոթասի արտադրության սարքավորում՝ գումարով 250.000.000 դրամ, որը ձեռք է բերվել ավելի բարձր գնով՝ 398.000.000 դրամով, հիմք՝ 3556(5) հարկային գործ էջ 104: Նշված գործարքի հետևանքով 2011 թ-ի շահութահարկի հաշվարկով նվազեցվող ծախսերը պակաս է հաշվարկվել իրացված բոթասի արտադրության սարքավորման ձեռքբերման արժեքի և շահութահարկի հաշվարկով ներկայացված իրացված սարքավորման ինքնարժեքի տարբերության չափով՝ 148.000.000 դրամ և համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետի չհաշվարկվող ԱԱՀ-ի գումարի չափով 296.000.000 դրամ, որը պետք է միացվեր ծախսերին: Այսպիսով, 2011 թ-ի հաշվետու տարում հարկային վնասը կազմում է 177.600.000 դրամ:

«ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ կողմից բոթասի արտադրության սարքավորման ձեռքբերման և իրացման վերաբերյալ ստուգման ակտում հիշատակված փաստաթղթերի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրեց, որ նշված ապացույցները հիմնավորում են բոթասի արտադրության սարքավորումն ընկերության կողմից 398.000.000 դրամով ձեռքբերելու և 250.000.000 դրամով իրացվելու հանգամանքը: Մասնավորապես, համաձայն 3556(5) հարկային գործում առկա ապացույցի բոթասի արտադրության սարքավորումը «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ կողմից ձեռք է բերվել 398.000.000 դրամով, ինչը չի վիճարկվում նաև ընկերության կողմից: Այնուհետև, համաձայն 03.10.2011 թ-ի թիվ Ա8450547954 հարկային հաշվի (այսուհետ նաև՝ հարկային հաշիվ)

նշված բոթասի արտադրության սարքավորումը «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ կողմից իրացվել է «Զվարթին» կազմակերպությանը 250.000.000 դրամով: Ընդ որում, հարկային հաշվում մատակարարվող (իրացվող) ապրանքի անվանումը նշված է «Բոթասի արտադրության սարքավորումներ», քանակը՝ 1 հատ: Այսինքն, հարկային հաշվում առկա չէ որևէ գրառում այն մասին, որ բոթասի արտադրության սարքավորումն իրացվում է ոչ թե ամբողջությամբ, այլ՝ դրա մի մասը: Այլ ապացույցներ, որոնք կհիմնավորեին բոթասի արտադրության սարքավորման միայն մի մասն իրացված լինելու վերաբերյալ, սույն գործում առկա չեն:

Վերոգրյալ փաստական հանգամանքը հիմք է հանդիսացել նաև ստուգման ակտով ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ պարտավորություններ հաշվարկելու համար: Մասնավորապես, ստուգման ակտի 5-րդ կետով արձանագրվել է, որ հարկային գործում առկա բոթասի արտադրության սարքավորման ձեռքբերման և իրացման վերաբերյալ հիմքերից հետևում է, որ այն ձեռք է բերվել 398.000.000 դրամով, որից հաշվարկված ԱԱՀ-ն կազմել է 79.600.000 դրամ և իրացվել է 250.000.000 դրամով, որի ԱԱՀ-ն կազմել է 50.000.000 դրամ: Համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետի հաշվանցման ենթակա չէ իրացման ժամանակ հաշվարկված ԱԱՀ-ի և այդ ապրանքների ձեռքբերման ժամանակ մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի բացասական տարբերությունը: Հետևաբար, 2011 թ-ի սեպտեմբեր ամսին ԱԱՀ-ի դեբետից ենթակա էր պակասեցման 29.600.000 դրամ: Արդյունքում, հիմք ընդունելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթները լրացուցիչ գանձման է առաջադրվել ավել հաշվանցված ԱԱՀ-ն՝ գումարով 29.600.000 դրամ, ինչպես նաև տուգանք՝ գումարով 14.800.000 դրամ: Միաժամանակ, հիմք ընդունելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներն առաջադրվել է նաև 44.400.000 դրամ պակասեցման ենթակա գումար:

Ինչ վերաբերվում է ստուգման ակտով հաստատագրված վճարների գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունների վերաբերյալ բողոքաբերի կողմից բերված փաստարկներին, ապա դրանք հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգման ակտի 8-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ընկերության կողմից 2010 թ-ի նոյեմբեր ամսին իր գործունեության դադարեցման և լուծարային գործընթացի վերաբերյալ հայտարարություն ՏՀՏ ներկայացնելուց հետո 2010 թ-ի դեկտեմբեր ամսին շարունակվել է գազալիցքավորման գործունեությունը: Արդյունքում, հիմք ընդունելով «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ից ստացված տեղեկատվությունը, որի համաձայն «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ն 2010 թ-ի դեկտեմբեր ամսին ստացել է 541200 մ3 գազ, ինչպես նաև ընկերության հարկային գործում առկա 07.12.2010 թ-ի արձանագրությունն այն մասին, որ ընկերության գազալցակայանում իրացվել է գազը, սակայն չի ներկայացվել գազի ֆիզիկական ծավալների վերաբերյալ տեղեկություն 2010 թ-ի դեկտեմբեր ամսվա համար, հաստատագրված վճարի գծով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

Սույն գործում առկա է Գևորգ Հովհաննիսյանի 07.12.2010 թ-ի գրավոր հայտարարությունն այն մասին, որ նա հանդիսանում է «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ի փոխտնօրենը և իրավասու է տնօրենի բացակայության ժամանակ փոխարինել իրեն: Հայտարարությունում Գևորգ Հովհաննիսյանը նշել է նաև, որ «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ն ներկա դրությամբ զբաղվում է ավտոգազալիցքավորմամբ Երևան-Էջմիածին մայրուղու աջակողմյան մասում երկու կետերի միջոցով, իսկ ծախսակողմյան մասում՝ մեկ կետի միջոցով: Ըստ հայտարարության, 07.12.2010 թ-ի ժամը 17:00-ի դրությամբ ընկերության ոչ մի գազալցակայանում ՀԴՄ տեղադրված չէ և կանխիկ դրամի մուտքերը ՀԴՄ մուտք չեն արվում:

Գործում առկա է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ հարկային տեսուչների կողմից «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ փոխտնօրենի մասնակցությամբ 07.12.2010 թ-ին կազմված արձանագրությունը, որում մասնավորապես նշված է, որ այցելություն է կատարվել «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ Էջմիածին-Երևան մայրուղու աջակողմյան հատվածում գտնվող ավտոգազալիցքավորման կայան՝ ընկերության կողմից գործունեություն իրականացնելու փաստը ճշտելու նպատակով: Գազալցակայանի վաճառքի կետի պատուհանին փակցված է եղել հարկ վճարողի տեղեկությունները փակցնելու հայտարարության օրինակելի ձևը, որի համաձայն նշված վայրում գազալիցքավորման իրականացվում էր «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ի կողմից: Արձանագրությունում նշված է նաև, որ

այցելության պահին գազայցակայանն աշխատում էր՝ սպասարկվում էր 2 մեքենա: Գազայցակայանում աշխատում էին 3 հոգի, որոնք բանավոր հայտարարել են, որ օրվա ընթացքում լիցքավորվել է մոտ 30 մեքենա: 07.12.2010 թ-ի արձանագրությունը ստորագրված է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ հարկային տեսուչների և «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ փոխտնօրենի կողմից:

07.12.2010 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ հարկային տեսուչների կողմից «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ փոխտնօրենի մասնակցությամբ կազմվել է նաև մեկ այլ արձանագրություն, որի համաձայն «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ին պատկանող Երևան-Էջմիածին մայրուղու աջակողմյան հատվածում «Զվարթնոց» խաղատան հարևանությամբ գտնվող ավտոգազայցակայանի (համաձայն փակցված հայտարարության) այցելությամբ պարզվել է, որ գազայցակայանում այցելության ժամանակ աշխատում էին երեք մարդ և ըստ գազայցակայանի գանձապահ Արսեն Գալստյանի հայտարարության ժամը 16:45-ի դրությամբ սպասարկվել է շուրջ 35 մեքենա: Նշված արձանագրությունը նույնպես ստորագրված է ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ հարկային տեսուչների և «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ փոխտնօրենի կողմից:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ ապացույցները հիմնավորում են «ԿԱՐ-ԲԵԳ» ՍՊԸ-ի կողմից 2010 թ-ի նոյեմբեր ամսին գործունեությունը դադարեցնելու և լուծարային գործընթացի վերաբերյալ ՏՀՏ հայտարարություն ներկայացված լինելու պայմաններում 2010 թ-ի դեկտեմբեր ամսին գազալիցքավորման գործունեություն իրականացնելու փաստը: Նշված հանգամանքն իր հերթին հիմնավորում է, որ ստուգման ակտի 8-րդ կետով հաստատագրված վճարների գծով պարտավորություններն առաջադրվել են օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ ՕՀԿ 25.06.2014 թ-ի թիվ 1004575 ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝



ՈՒՄԵՆԱՆՅԱՆ